երկրների փոխհարաբերությունները նոր որակ են ձեռք բերում՝ ուղենշելով համագործակցության փարբեր ոլորտներ:

Վեհափառ Հայրապետը մասնավոր անդադարձ կարարեց Իրաքի հայ համայնքին՝ ուրախությամբ նշելով, որ երկրի խնդիրների կարգավորման հետ մեկտեղ առաջընթաց է ապրում նաեւ հայ համայնքը՝ վերադառնալով իր բնականոն կյանքին: Նորին Սրբությունը խոսեց նաեւ Իրաքի հայոց թեմի գործունեության, միջեկեղեցական-միջկրոնական հարաբերություններում փոխըմբռնման, համերաշխության եւ եղբայրական ոգու զորացմանն ուղղված թեմի ջանքերի մասին: Այս առիթով Վեհափառը փոխվարչապետի միջոցով իր գնահատանքը հղեց Իրաքի իշխանություններին՝ հայ համայնքի հանդեպ ունեցած ուշադրության, ինչպես նաեւ այն օժանդակության համար, որ ցուցաբերվում է համայնքի ազգային-եկեղեցական կառույցների վերակառուցման եւ հաստատման գործում:

Իր հերթին, Իրաքի փոխվարչապետը, ուրախություն հայտնելով հայոց հոգեւոր կենտրոն իր առաջին այցի առիթով, Վեհափառ Հայրապետին փոխանցեց Իրաքի նախագահի եւ վարչապետի ջերմ ողջույնները: Դրն. Շաուեյսը նշեց, որ ամեն ջանք պետք է գործադրվի երկու ժողովուրդների միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերությունները պահպանելու համար: Իրաքի փոխվարչապետն ընդգծեց նաեւ Հայ Եկեղեցու եւ հայ համայնքի կարեւոր եւ դրական դերակատարությունը երկրի կյանքում:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը մաղթեց, որ Աստված արդյունավորի երկու երկրների բարեկամության ամրապնդմանն ուղղված ջանքերը եւ հաստատուն խաղաղության մեջ պահի Իրաքը եւ նրա աստվածասեր ժողովրդին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ ՆԻՍ (ՖՐԱՆՍԻԱ)

Սեպտեմբերի 7-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հովվապետական այցով մեկնեց Ֆրանսիայի հայոց թեմ՝ Նիսի ծուխ: Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տ. Շահե աբեղա Անանյանն իբրեւ գավազանակիր եւ Կաթողիկոսական գրասենյակի գործավար-քարտուղար Տ. Ադամ քահանա Մակարյանը: Հայրապետական շքախմբի կազմում ընդգրկված էին ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը, Ալպ-Մարիտիմ, Վար եւ Մոնակո շրջանների հոգեւոր հովիվ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը:

Փարիզից Նորին Սրբությանն ուղեկցեցին նաեւ Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական պատվիրակ եւ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարյանը, Ֆրանսիայում ՀՀ դեսպան տիար Վիգեն Չիտեչյանը: Նիսում Նորին Սրբությանը դիմավորեցին Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, Տ. Վահան եպիս-

կոպոս Հովնանյանը, Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանը, Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը, Մարսելում ՀՀ գլխավոր հյուպատոս տիար Վարդան Սիրմաքեշը, ծիսական խորհրդի անդամները եւ հավատացյալ հայորդիներ:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Նիսի քաղաքապետ Քրիստիան Էստրոզիի հետ: Հանդիպմանը ներկա էին քաղաքային եւ նահանգային իշխանությունների ներկայացուցիչներ, Նիսի հայ համայնքի շուրջ երկու հարյուր անդամներ եւ հրավիրյալներ: Քաղաքապետը բարիգալստյան խոսքում ողջունեց Նորին Սրբության այցը Նիս՝ անդրադառնալով Ֆրանսիայի եւ Նիս քաղաքի առաջընթացին ու զարգացմանը հայորդիների բերած մեծ նպաստին ու ներդրումին, նշելով, որ քաղաքի իշխանությունների կողմից մշտապես աջակցություն է ցուցաբերվում հայ համայնքին: Քաղաքապետն իր խոսքում դատապարտեց նաեւ հայ սպա Գուրգեն Մարգարյանին սպանած հանցագործին Հունգարիայի կողմից Ադրբեջանին արտահանձնելու եւ Ադրբեջանի նախագահի կողմից ներում շնորհելու պահարակելի իրողությունը, շեշտեց Հայոց Ցեղասպանության համընդհանուր դատապարտման եւ հատկապես Թուրքիայի կողմից ճանաչման անհրաժեշտությունը:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում գնահատանք հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին եւ Նիսի քաղաքապետին հայ համայնքին մշտապես սատարումի, ինչպես նաեւ մարդասպան հանցագործին Ադրբեջանի նախագահի կողմից ներում շնորհելու փաստը խստորեն դատապարտելու համար: Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց Քրիստիան Էստրոզիին նաեւ այն նախանձախնդիր ջանքերի համար, որ ներդրել է Ֆրանսիայի Ազգային ժողովում եւ իր քաղաքական գործունեության ընթացքում՝ Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակը վառ պահելու, հայ ժողովրդի ու մարդկության դեմ իրականացված այդ ոճրագործությունը դատապարտելու եւ Հայոց Ցեղասպանության մերժումը քրեականացնող օրենքի ընդունման գործընթացներում: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ Նիսի հայորդիները պիտի հաղթահարեն ներհամայնքային կյանքում առկա դժվարությունները՝ շարունակելով Նիսի ծուխում նորանոր հաջողություններ արձանագրել, քանզի ասպվածսիրությունը, մեր Սուրբ Եկեղեցու կարգի ու կանոնների եւ սրբազան ավանդության հանդեպ հավատարմությունն ու հարգանքը մեր ժողովրդի փառքն ու հպարտությունն են, մեծ տեղ ունեն հավատավոր հայորդիների սրտում եւ չեն կարող ստվերվել:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սեպտեմբերի 8-ին հանդիպում ունեցավ Ալպ-Մարիտիմ նահանգի նահանգապետ Քրիստոֆ Միրմանի հետ, այնուհետեւ հայրապետական պատվիրակության անդամների, թեմական եւ ծիսական վարչականների, քաղաքապետարանի պաշտոնատար անձնանց եւ հավատացյալ հայորդիների հետ ուղեւորվեց Հայաստանի այգի, որտեղ ծաղկեպսակ զետեղեց Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարի մոտ, աղոթեց Եղեռնի զոհերի հոգիների խաղաղության համար: Նույն օրը Հայոց Հայրապետը ծաղկեպսակ դրեց նաեւ Համաշխարհային պատերազմի զոհերի հուշարձանին:

Երեկոյան «Նեգրեսքո» հյուրանոցի սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընթ-

Հանդիպում Նիսում

Ցեղասպանության խաչքարի մոտ

րիք՝ ի պատիվ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Միջոցառման ընթացքում Վեհափառ Հայրապետի կողմից Հայ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանով պարգևատրվեց պատմաբան, հրապարակախոս, բարերար Հովհաննես Չիլինգիրյանը՝ ի գնահատություն Հայոց Ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ներդրած ջանքերի, եկեղեցանվեր ու ազգասեր երկարամյա վաստակի: Նորին Սրբությունը հանդես եկավ խոսքով՝ ի մասնավորի ասելով. «Միրելիներ, դարերով վկայված է այն իրողությունը, որ մեր Սուրբ Եկեղեցուց, սրբազան արժեքներից հեռու հնարավոր չէ պահպանել ազգային ինքնությունն ու գիտակցությունը, անխաթար պահել հավատքը: Քրիստոսի Սուրբ Եկեղեցին գոյավորվում է միասնությամբ ու հավատացյոց հավաքականությամբ, քանզի ինչպես հաստատում է առաքյալը, ի Քրիստոս «մի մարմին ենք բոլորս» (Ա. Կորնթ. ժ. 17): Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին միասնության այս անհերքելի ճշմարտությունը քարոզեց ու արմատավորեց մեր ժողովրդի մեջ՝ իբրեւ հիմք հայ քրիստոնեական ինքնության ու հարատեւության: Մենք սիրո, միասնության ու միաբանության եւ առ մեր Սուրբ Եկեղեցին հավատարմության այս հորդորով ենք եկել եւ ակնկալում նաեւ Հայ Եկեղեցու ծոցից հեռացած որոշ հայորդիների զղջումով վերադարձը Մայր Եկեղեցի, որը սիրող ծնողի պես փայփայում է իր զավակներին, սնում ու խնամում եւ բաշխում կենարար շնորհները Ամենակալ Տիրոջ: Բոլոր հայորդիք զավակներն են մեր Սուրբ Եկեղեցու, որն իր օրհնությունները բաշխում է ամենքին, ներում ապաշխարողի մեղքերը, հորդորում սրբորեն պահպանել ու հարգել մեր հայրերի կողմից հաստատված ու մեզ ավանդված եկեղեցական սրբազան կանոններն ու ավանդությունը եւ ապրել ու գործել հավատքով զորացյալ, որպեսզի շեն ու պայծառ լինի ազգային-եկեղեցական մեր կյանքը»:

Վեհափառ Հայրապետը հորդորեց հավատավոր հայորդիներին մեր Սուրբ Եկեղեցու եւ Հայրենիքի պայծառության նախանձախնդրությամբ շարունակել ապրվածահաճո եւ բարեպաշտ ընթացքը, լինել օրինապահ ու պատվավոր քաղաքացիները Ֆրանսիայի, միշտ մնալ հավատարիմ եւ արժանավոր զավակները հայոց ազգի եւ Սուրբ Եկեղեցու:

Սեպտեմբերի 9-ին Հայրապետական սուրբ Պատարագ մատուցվեց Նիս քաղաքի Սուրբ Աստվածածին բազիլիկ եկեղեցում: Պատարագին ներկա էին Քույր Եկեղեցիների, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, Նիսի քաղաքապետ Քրիստիան Էստրոզին, բազմաթիվ հավատացյալներ: Պատարագից հետո Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ Մարսելի եւ Նիսի ծխական խորհուրդների անդամների, հավատացյալ հայորդիների հետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ